

պատերազմաց մեջ նախարարութիւնը մեծաւ մասամբ միաբան էր, վասնզի կրօնքի պաշտպանութեան էր կռիւը, իրեն ցրուեալ զօրութիւնը միացնելու մեծ շարժառիթ մը պետք էր՝ կրօնքը, վասնզի նախարարութեան բնութիւնը անիշխանութիւն, անմիաբանութիւն էր: Իսկ անմիաբանութեան մասին՝ հայերը նոյնչափ անմիաբան եղած են ինչչափ ամէն աղինք, որ զօրաւոր կառավարութիւն չեն ունեցեր երբեք: Իրենք ոչ երբեք ունեցեք են յունաց պէս քսան, հինգ տարի քշող քաղաքական պատերազմ մը Պեղոպոնետեան պատերազմի պէս, թեպէտ նա խարարութեանց անմիաբանութիւնը հար եւ նման էր այդ Յունաստանի փոքր, փոքր հասարակապետութեանց, միայն այն տարբերութեամբ, որ հոն ժողովուրդն ազատ եւ ամէն բան էր, եւ ուսմունքը բանական մարդը բարձրացուցեր էր, իսկ Յայաստան՝ ժողովուրդը ոչինչ էր, եւ իր բռնաւորներն ամէն ինչ: Յունաստան ծովէ շրջապատ եալ բնական ամրութեամբ դարձեալ մեծ տերութեան մը կարգ անցնելու համար պետք եղաւ, որ Մակեդոնացուոց լուծին տակ անցնի եւ Ադեքսանդրի հետ արշաւի: Առանց զօրաւոր կազմակերպեալ իշխանութեան եւ խիստ օրինաց անկարելի է միաբանութիւն, վասնզի փոքրիկ շահեր մեծ շահերու դէմ կապստամբին, եւ մեծ շահեր զօրութեան պետք ունին պզտի շահեր եւ անոնց բանսարկութիւնքը ճնշելու համար: Խիստ կառավարութեան ամենէն անպիտանը նախադասելի է անիշխանութեան: Յայ նախարարութիւնն անիշխանութիւն էր արմատացեալ: Եւ որովհետեւ չի կրցաւ կանոնաւոր եալ ազնուապետութիւն մը նաեւ կազմել՝ ինք ինկաւ գահավեժ եւ ազգն էլ իր հետ տարաւ: Այդ ազնուապետութիւնը՝ եթէ կարենար կազմել նախարարութիւնը, ազգին նաև երջանկութեան ճամփայ թերեւս բանար. բայց ուելիցէ՛ բան կազմելու համար՝ արդարութեան եւ կանոնի մը հնազանդել յանձն առնելու է, այս կամքը հազիւ բանի մը նախարարաց քով կ'երեւի պատմութեան մեջ, վասնզի անիշխանութիւնը կը ներէ միայն սանձարձակ զեղծմունք՝ ուսկից կամօք եւ մասամբ իսկ զրկուիլը շատ մեծ առաքինութիւն է:

Յայք ընդհանրապէս միաբան եղած են միայն այն վայրկենին, երբ իրենց կրօնքին բռնաբարութիւն հասներ ուրէ իշխանութենէ եւ զօրութենէ. ամէն բանի անտարբեր հայը միշտ պատրաստ կը տեսնենք բռնութիւնը բռնութեամբ վանելու, եւ եթէ անկարելի լինի՝ ամէն հալածանաց տանելու անխախտ կենալով հայրենի դաւանութեանց վրայ: Ամենուն յայտնի է եւ վերն էլ յիշեցինք թէ ինչպէս հայ քրիստոնէութիւնը անընկճելի մնաց Սասանեանց կռապաշտութեան դէմ. նոյնը կը տեսնենք նաեւ Բիւզանդիայ կայսերաց բռնութեանց եւ ամէն տեսակ պատճառաբանութեանց դէմ. կրօնասիրութիւն էր այս ընդհանուր նկատմամբ. բայց անիշխանութիւնը անմիաբանութիւն կարծողաց կը զրուցենք թէ աւելի հետեւանք էր նա եկեղեցական